

Յ Ա Յ Տ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ես մահասակ մեր ցեղին զաւակն եղայ մահասակ,
 Եւ ո՛րք մընացի հայրենիքս պէս.
 Փողոցին մէջ պառկելով, պալասներու շուքին սակ
 Ծաղիկ փաղեցի ի՛մ գարուններէս:

Մահանալով ապրեցայ, եւ ապրելով՝ մահացայ,
 Ես՝ ախորի մէջ, եւ ախորն իմ մէջ.
 Յաւէս Աստուած փրցնուցի, միշտ ներկայ ու բացակայ,
 Ես՝ արցունքով շէշ, արցունքն ինձմով շէշ:

Մերք սիրեցի ուժգնօրէն, եւ մերք ուժգին ասեցի,
 — Կիզիչ արեւուն եւ պա՛ղ ձիւնին սակ.
 Արձանացայ կամակոր, եւ հեւասպառ վագեցի,
 — Յաւին մերք ծանօթ եւ մերք անգիտակ:

Նախ արսիս մէջ շնչեց յոյս, յետոյ ծընաւ տարակոյս,
 Եղայ հարսնեւոր եւ յուղարկաւոր.
 Ծիծաղեցայ եւ յանկա՛րծ արտասուեցի արսայոյզ՝
 Իմ բախիսս վըրայ՝ մե՛րկ ու վիրաւոր:

Հըրդե՛հ պոռթկաց մտքիս մէջ դրժոխային, կասաղի,
 Եւ մերք արշալոյս շողաց երկնային.
 Մտածելով յըղացայ, եւ զգալով երգեցի,
 Խաւարէն լոյսին, լոյսէն խաւարին:

Արդ արցունք կայ եւ ծիծաղ, խաղաղութի՛ւն, փոթորի՛կ,
 Իմ երգերուս մէջ՝ արո՛ւ եւ բրբրումն.
 Գանկի վըրայ խոռոչներ, շրմամարի սակ յուշիկ,
 Եւ փա՛ղք աչքերու խորհուրդն անանուն:

Արի՛ւնս է որ դեռասի շրջան կ'ընէ ուժգնօրէն
 Երակներուս պէս՝ իմ տողերուս մէջ,
 Մարդկութեան ցա՛ւն ամենի՝ զբալէն ու հեւալէն՝
 Իմ ցաւերուս հետ կ'ընէ ելեւէջ:

Կը բաբախէ սի՛րսս այնտեղ, ու կը գործէ մի՛սս անվերջ
 Իմ երգերուս մէջ սե՛ր ու արե՛ւ կայ.
 Յաւէն մաշած ու հիւանդ հոգիներու շէնքին մէջ
 Մահուան ըստուերն է որ մի՛շտ կը խաղայ:

Գուցէ սիրեն փողորէն ու մահէս ետ կանչե՛ն զիս
 Մտքե՛ր՝ որ կըրնան հասկընալ զանոնք.
 Երկընքի մէջ այն ասեմ գուցէ խայտայ իմ հոգիս,
 Մտքե՛ր՝ որ կը զգան՝ արտասուեն նորոգ:

ՀՐԱԶ ԳԱԶԱՐԵՆՑ